Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2021 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) 2021 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակի ընթացքում նախատեսվում է՝

- Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական համակարգի սակագների հաշվարկման մեթոդիկաների և սակագների սահմանման (վերանայման) կարգի լրամշակում,
- Էներգետիկայի բնագավառի պետական մասնակցությամբ ընկերությունների (ՀԱԷԿ, ԵՐՋԷԿ, ԲԷՑ, ԷԷՀՕ, ԷԷՇՕ) համար անհրաժեշտ հասույթի, սակագնի առանձին տարրերի ֆիքսման և դրա տարեկան վերանայման մոտեցումների հաստատում 10-ամյա ժամանակահատվածի համար,
- Սպառողի էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգով ամրագրված դրամային մեծությունների վերանայում,
- Խոշոր էլեկտրակայանների 2022 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունների հաստատում,
- Էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների սակագների վերանայում,
- Գազամատակարարման համակարգի սակագների հաշվարկման մեթոդիկայի լրամշակում,
- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավերության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով հանրային կազմակերպությունների 2021 թվականի գնումների առանձին գործարքների

ընտրանքային մոնիթորինգի իրականացում, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում,

- Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էներգետիկայի բնագավառում սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման, էլեկտրական էներգիայի բաշխման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մակատարարման պայմանագրի օրինակելի ձևի լրամշակում,
- Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էներգետիկայի բնագավառում էլեկտրական էներգիայի բաշխման ծառայության մատուցման և էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարման (Հրապարակային օֆերտա) պայմանագրի օրինակելի ձևի լրամշակում,
- Հանձնաժողովի կողմից սահմանված՝ էներգետիկայի բնագավառում կառուցվող բազմաբնակարան շենքի կամ կառուցապատվող թաղամասի սպառման համակարգն էլեկտրական ցանցին միացման պայմանագրի օրինակելի ձևի լրամշակում,
- Էլեկտրաէներգետիկական մանրածախ շուկայի առևտրային կանոնների լրամշակում,
- էլեկտրաէներգետիկական շուկայի բաշխման ցանցային կանոնների լրամշակում,
- Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնների լրամշակում,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրածախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգի իրականացում,

- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների վերանայում,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկի համաձայնեցում հանձնաժողովի հետ,
- Դատական գործերի վերաբերյալ ամփոփ տեղեկատվության հրապարակում
- Արտակարգ պատահարների արագ արձագանքման ծառայության 112 (911), հրշեջ ծառայության 101, Հայաստանի Հանրապետության ոստիկանության 102 և շտապ օգնության 103 համարներին կատարվող կանչերի (հաղորդագրությունների) դեպքում օպերատորի կամ ծառայություններ մատուցողի կողմից իր հաճախորդի (բաժանորդի) կողմից օգտագործվող ծառայության վայրի վերաբերյալ տեղեկությունների (հաճախորդի տեղորոշում) և հաճախորդի անձնական տվյալների բացահայտելու կարգի ամփոփում,
- «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2022 թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերի հաստատում,
- Հանձնաժողովի 2022 թվականի տարեկան աշխատանքային ծրագրի հաստատում, որտեղ ըստ ժամանակացույցի կարտացոլվեն հանձնաժողովի գործունեության ծրագրով նախատեսված կոնկրետ աշխատանքները:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,

- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: